ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> փետրվարի 2015 թվականի N: 15-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու զինվորական կոմիսարիատի զինապարտների կցագրման հանձնաժողովի նյարդաբան Կարինե Պետոյանի 2015 թվականի փետրվարի 3-ի դիմումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության 2015 թվականի փետրվարի 9-ի թիվ 52124 առաջարկությունը՝

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու զինվորական կոմիսարիատի զինապարտների կցագրման հանձնաժողովի կազմում Կարինե Պետոյանի փոխարեն ընդգրկել Անահիտ Բաղդասարյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զորակոչային տեղամասերին 1999 թվականին ծնված և ավագ տարիքի պատանիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման մասին» N 2-Ա որոշման հավելվածում «Կարինե Պետոյան» բառերը փոխարինել «Անահիտ Բաղդասարյան» բառերով:

Իսկականի հետ ճիշտ է

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ